ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER MKHITAR HERATSI

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • 2 Koryun St., Yerevan, 0025, Armenia • Tel/Fax (374.10) 58 -25 -32 • URL: www.ysmu.am • e-mail: info@ysmu.am

թիվ 02.01/3487

«09» 12 2014թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ նախագահ
Պարոն Է. Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան,

Ի պատասխան Ձեր 18.11.2014 թվականի թիվ N-h-88-h-1 գրության հայտնում ենք հետևյալը.

2014-2015 ուսումնական տարում՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) Ընդհանուր բժշկության ֆակուլտետի 4-րդ կուրսում 50 անվճար տեղերից բաշխվել է 29-ը՝ հիմք ընդունելով ներքոթվարկյալ իրավական ակտերը.

1. Ուսման վճարների փոխհատուցման իրավունքի մասին

ա) Կրթության մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ. «ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների, ուսումնական հաստատությունների ...»:

բ) «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն. *«Պետությունն ապահովում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ուսանողների և ասպիրանտների պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի), զեղչ, կրթական դրամաշնորհներ, վարկեր)»:*

2. Բարձր առաջադիմության մասին

ա) «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 6 հոդվածի 4-րդ մասի համաձայն *«ուսման վճարի փոխհատուցում նպաստի*

ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով ***<u>բարձր առաջադիմություն</u>*** *ունեցող ... ուսանողներին...»:*

բ) ՀՀ Կառավարության 27.07.2006 թվականի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին» կարգի 4-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ ուսանողին ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել ***<u>բարձր առաջադիմություն</u>*** ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:

գ) ԵՊԲՀ 20.11.2013 թվականի ռեկտորատի որոշմամբ կանոնակարգվել է օրենսդրությամբ սահմանված «բարձր առաջադիմություն» հասկացությունը, մասնավորապես ԵՊԲՀ ռեկտորատի որոշմամբ սահմանվում է.

«Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ Կառավարության 27.07.2006 թվականի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին» կարգը սահմանել Համալսարանի ուսանողների բարձր առաջադիմության հետևյալ պայմանները.

Ուսանողն ունի «Բարձր առաջադիմություն» ունեցող ուսանողի կարգավիճակ, եթե.

1) անվանական կրթաթոշակառու է,

2) ուսման վարձի լրիվ փոխհատուցման նպաստի մրցույթի ժամանակ ունի համապատասխան ռեյտինգային միավորներ և ստուգարքներն ու քննությունները հանձնել է մինչև մարման շրջանը,

3) սոցիալական հանգամանքով ուսման վարձի մասնակի փոխհատուցմանը հավակնելու դեպքում հաղթահարել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը:

4) Համալսարանի կանոնակարգերով նախատեսված հիմքերով ուսման վարձի մասնակի փոխհատուցմանը հավակնելու դեպքում հաղթահարել է Համալսարանի կողմից սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը, այն է՝ առնվազն 70 տոկոս առաջադիմությունը:»:

ԵՊԲՀ 27.11.2013 թվականի «Ուսանողների գնահատման համակարգում ստուգարքների և քննությունների անցկացման ու հանձման» կարգի 24-րդ կետով սահմանվում է նաև. *«Մարման շրջաններում ստուգարքներ և քննություններ հանձնած ուսանողը չի մասնակցում ուսման վարձի փոխհատուցման նպաստի մրցույթին»* (Կարգը տեղադրված է ԵՊԲՀ պաշտոնական կայքի՝ www.ysmu.am «Իրավունք» բաժնում):

3. Եզրակացություն

Ամփոփելով վերոգրված իրավական ակտերը եզրակացնում և փաստում ենք.

ա) պետությունը երաշխավորում է բուհի ուսանողների ֆինանսական օժանդակությունը, այդ թվում ուսման վարձի փոխհատուցման իրականացումը.

բ) ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով 1-ին կուրսում տրվում է մրցույթի արդյունքներով բուհ ընդունված, իսկ հաջորդիվ ուսումնական տարիներին՝ ուսումնական տարվա արդյունքներով ***բարձր առաջադիմություն*** ունեցող ուսանողներին.

գ) «Բարձր առաջադիմություն» եզրույթը սահմանված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 27.07.2006 թվականի թիվ 1183-Ն որոշմամբ և ԵՊԲՀ իրավական ակտերով:

Այսինքն՝ օրենսդրության և ԵՊԲՀ իրավական ակտերի պահանջն է ուսանողին փոխհատուցել միայն բարձր առաջադիմության հիմքով:

2012-2013 և 2013-2014 ուսումնական տարիներին ուսանողները օգտվել են ուսման վճարի փոխհատուցումներից, քանի որ նշված տարիներին «բարձր առաջադիմություն» հասկացությունը համալսարանական ակտերով կանոնակարգված չէր:

Հավելենք նաև, որ թափուր մնացած տեղերի համար նախատեսվող 16 միլիոն դրամը ԵՊԲՀ-ն չի ստացել և չի տնօրինել, քանի որ ՀՀ ԿԳ նախարարություն հայտ չի ներկայացրել և պետական բյուջեից գումար չի ստացել:

Որպես ի գիտություն տեղեկացնում ենք նաև, որ ուսանողը՝ համաձայն Համալսարանի հետ կնքված պայմանագրի պարտավոր է ծանոթանալու համալսարանական իրավական ակտերին և կանոնակարգերին:

Ուստի փաստում ենք, որ ԵՊԲՀ կողմից չի խախտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և ուսանողների իրավունքը:

Հարգանքով՝

Ռեկտոր Մ.Զ. Նարիմանյան